ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/32693-2024

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (Կ-891-17.07.2024-ԳԿ-011/1) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում երկրորդ ընթերցմամբ քննարկելու համար:

1. 3-րդ հոդված՝

1) դրույթների համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին՝ 8-րդ կետից հետո լրացվող կետերը համարակալել որպես 9-ից 27-րդ կետեր, միաժամանակ հոդվածի 3-րդ մասում «21-րդ» մասին արված հղումը փոխարինել որպես «25-րդ» մաս,

2) 3-րդ հոդվածով գործող օրենքի 12-րդ հոդվածի նոր խմբագրությամբ 16-րդ՝ (խմբագրված 20-րդ) կետի 11-րդ մասում «մասնագետի» բառից հետո առաջարկում ենք հանել «և գործավարի (օգնականի)» բառերը, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին կարգավորումը առաջարկում ենք սահմանել առանձին նախադասությամբ՝ տարընթերցումից խուսափելու նպատակով՝ «ընտրությունը» բառից հետո դնել «:» կետադրական նշանը, «Կնքում և» բառերով սկսել նոր նախադասություն, միևնույն ժամանակ «պայմանագրերը» բառը փոխարինել «պայմանագրեր» բառով:

2. 7-րդ հոդված՝

1) Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի՝ «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով

մասնագիտական գործունեությունը դադարեցված բարձրագույն կրթություն չունեցող մանկավարժներին օժանդակության ծրագիրը հաստատելու մասին» N 621-Լ որոշմամբ նախատեսված շահառուներին հնարավորություն ընձեռել կամավոր ատեստավորման դրական արդյունքի դեպքում շարունակել մանկավարժական գործունեու- թյունը, ուստի անհրաժեշտ է ավելի հստակ ու թիրախային ձևակերպումով սահմանել ուսուցիչ աշխատելու մասին կարգավորումը:

Նախորդ ձևակերպման արդյունքում կարգավորումը վերաբերում էր առհասարակ միջին մասնագիտական կրթություն ունեցողներին, ինչն առաջացնում էր անհամապատասխանություն օրենքի և որոշման միջև:

Հաշվի առնելով վերագրյալը՝ առաջարկում ենք 7-րդ հոդվածով՝ Օրենքի 26-րդ հոդվածի նոր խմբագրության 2-րդ կետով լրացվող 4-րդ մասում «տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած անձը:» բառերի փոխարեն լրացնել՝

«Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջով մասնագիտական գործունեությունը դադարեցված և կամավոր ատեստավորում անցած անձը:»: բառերը:

2) 4-րդ կետի երկրորդ պարբերության համարակալումը առաջարկում ենք հանել,

3) 13-րդ կետում «կամավոր ատեստավորման» բառերի փոխարեն առաջարկում ենք

լրացնել «նույն» բառը՝ նույն նախադասության մեջ «կամավոր ատեստավորման եղանակով» բառերի անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով:

3. Դրույթների տրամաբանական հաջորդականությունը ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգավորումը նախատեսել որպես նույն մասի 2-րդ կետ:

Ըստ այդմ կետերի համարակալումը վերանայվել է:

4. 10-րդ հոդվածի 2-րդ կետում «ատեստավորման» բառի փոխարեն լրացնել «ատեստավորում» բառը:

Հարգանքով՝

/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ